Ունի քաղաքն զպարիսպ և զբերդ՝ շինեալ ի վաղ ժամանակաց, և այժմ ըստ մասին քայքայեալ։ Շինուածք են ի քարանց, և են իբրև գշինուածս բերդից։ Են ի նմա չորս եկեղեցիք. մին ֆրանչիսկեանց, միւսն մառոնից, երրորդն հերձուածօղ յունաց, իսկ չորրորդն ուղղափառ յունաց, զոր նորոգ շինեալ էր իշխան քաղաքին խօճայ իպրահիմ՝ ծախեալ ի շինութիւն նորա իբրև զվաստուն քսակ. որոց և յատակն է ի մարմարիոնայ քարանց, զորս գտեալ են ի պեղելն զերկիր. այս եկեղեցի յառաջագոյն ամ ըստ ամէ տայր չէխին հինգ հարիւր դահեկան. իսկ ամօք ինչ յառաջ առաջնորդն հերձուածօղ յունաց խոստացեալ է չէխին, թէ տաց քեզ ամ ըստ ամէ հազար դահեկան, եթէ զեկեղեցին ուղղափառաց տացես ինձ. իսկ չէխն ասացեալ է նմա. ոչ այդպէս. այլ դու և նա ևս տաջիք ամ ըստ ամէ հազար դահեկան, և իւրաքանչիւրն կալցէ զիւր եկեղեցի. ապա յայնմ հետէ երկոքին ևս տան հազար դահեկան։ Զայս լուեալ պատրիարգին կոստանդնուպօլսոյ՝ նզովեալ է զառաջնորդն հակառակօղ, և յաքսորս առաքեալ, յորում և մեռեալ է ի նզովս։ Բնակիչք քաղաքին ըստ մեծի մասին են ուղղափառ յոյնք. իսկ ի մնացելոց՝ ոմանք են մառօնիթք, և ոմանք յոյնք հերձուածօղք. իսկ տաճիկք արաբացիք սակաւ են և յանարգ գործս պարապեալ. են ևս ոմանք ի հայոց աղքատք. և սոքա ամենեքին առ հասարակ խօսին արաբացւոց լեզուաւ. և ամենեքին սարըխը են մեծամեծ սարըխով, և ոչ են թխադէմք իբրև զաղէքսանդրացիս։ Եկեղեցականք տեղւոյն ոչ տան զխարաճ։ Իշխան քաղաքին չէխ է. և է իբրև թէ ընդ իշխանութեամբ փաշային սէյտէյի, որ է սիդոն, զի տայ նմա հարկս։ Ինքն գրեթէ ոչինչ առնէ ի քաղաքին. այլ փոխան իւր կացուցեալ է ի վերայ քրիստոնէից զբարերարն մեր։ Օդ քաղաքին ջերմ է գրեթէ ըստ ջերմութեան օդոյն աղէքսանդրիոյ։...,

Ի յագրի ի 3 յուլիսի | Նուաստ ծառայ Հայր Մանուէլ [Էմիւրզէ],
1769 | Հայր Սուքէաս [Աղամալեանց] և Հայր Միքայէլ [Զամչեան]

ՄՂ.

Վերոյիշեալ նամակագիրները այս անգամ ընդարձակ թղթով մը կը նկարագրեն Մարոնիդ կուսաստանի մը տուած իրենց այցելութիւնը և հոն ունեցած իրենց առանձին տեսակցութիւնը համբաւաւոր սրբակեաց կուսանի մը հետ, որ և Աստուծմէ յայտնութիւններ ու տեսիլներ կ'ընդունի եղեր. անոր շուրջ կը պատմեն նաև սքանչելիքներ։

Կը տեղեկագրեն նաև Լիբանանու Անտոնեաններէն իրենց եղած հիւրասիրութիւնը։

Գերյարգելի Արքահօր մերում Տեառն Տեառն Ստեփաննոսի բարունապետի
խոնարհական համբուրիւ աջոյն՝ ողջոյն

... Արդ՝ յետ կալոյ մեր ի պերութ աւուրս երկուս, եկն ի լեռնէ անտի ի վանացն կրօնաւորաց եղբայր ոմն ընդ ջորեպանի վանացն, և հանդերձեալ էր յերկրորդում աւուր դառնալ անդրէն, վասն որոյ կալաք զէշս ի վարձու հնգետասան փարայիւ, և գնացաք ընդ նոսա ի լեառն։ Յանցանել մեր ընդ լերինսն՝ տեսաք վանորայս բազումս կրօնաւորաց և կուսանաց և զբազում եկեղեցիս, գոյին անդ և վանք մի փրանկիսկանաց և վանք մի յիսուսեանց։ Եւ առ ճանապարհաւն ընդ որ մեք անցանէաք էր վանքն մառոնիթ կուսանաց յորում է կոյսն այն՝ զորոյ սրբութենէ բազում ինչ լուեալ էաք այդր ի մառոնիթ վաճառականէն. և խոտորեցաք անդ տեսանել զնա և օրհնել ի նմանէ մեք երեքեանս և եղբայրն այն. իսկ ջորեպանն յառաջ էանց և գնաց։ Իբրև տեսին զմեզ կրօնաւորքն ուք անդ արտաքոյ վանացն ունէին բնակութիւն, առեալ տարան զմեզ առ եպիսկոպոսն վերակացու և խոստովանահայր կուսանացն։ Որոյ տեսեալ զմեզ՝ և հարցեալ թէ ուստի՞ էք,